

# ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐ

## ՕՐԹՕԳՈՒԹՅՈՒ ԵԿԵՂԵՑԻ

Պէտք է նկատել, որ ցայսօր Ռուսաստանում ծխական—համայնական կազմակերպութիւնը գոյութիւն չունի և ռուս հոգևորականները ոչ ժողովրդից կախումն ունին և ոչ էլ ծխական—համայնական գործերին են մասնակցում:

Այժմս արդէն ձայներ են լսուում մտցնելու ծխական—համայնական սիստեմը (ձևը) և եկեղեցական համբաւաբերն» (Перк. Вѣс.) արդարացի կերպով պահանջում է, որ ծխական քահանան իրաւունք ունենայ ծխական, զեմատվային և քաղաքային ընտրութիւններին մասնակցելու՝ թէ իբրև ընտրող և թէ իբրև ընտրելի: Թերթը նկատում է, որ քահանան այդպիսով կրկնապուծ ժողովրդի հետ և կը կարողանայ պաշտպանել նրա կրօնական—քարոյական շահերը:

Նոյն թերթում կարդում ենք. «Վաղուց նկատուած է, որ ժողովուրդը քարոզի ժամանակ չի մնում եկեղեցում, չի ուզում լսել և եկեղեցուց դուրս է գալիս: Դրա պատճառը քարոզ աւելու ժամանակի անյարմարութեան մէջն է, որովհետև քարոզ են խօսում մեղանում սովորաբար պատարագի վերջին, երբ ժողովուրդն արդէն յօգնած է լինում և դուրի քարոզ լսելու տրամադրութիւնից: Պէտք է քարոզել ճաշու աւետարանից յետոյ և այն էլ ոչ թէ բեմից, այլ եկեղեցու մէջ տեղում յատկապէս դրա համար շինած ամբիոնից, և այնպէս պէտք է անել, որ քարոզն իրեն բովանդակութեամբ հետաքրքիր լինի ժողովրդին, կապուի նրան զբաղեցնող առօրեայ խնդիրներին հետ և ժամակարգութեան անբաժան մասը կազմի»: \*

Ինչպէս ամբողջ Ռուսաստանի, այնպէս էլ բուն ռուսական եկեղեցին ազատ չը մնաց չեռաւոր Արևելքում ծագած պատերազմի ազդեցութիւնից և նրա ալիքներն հասան ու ցնցեցին:

\* Հայաստանայց եկեղեցին այս կողմից ունի բաւականին մեծ յարմարութիւն՝ բարձր բեմ եւ քարոզներն էլ սովորաբար խօսուում են պատարագի կիսին. բայց ափսոս որ քարոզը մեր ժամակարգութեան անբաժան մասն ու պարտադիր պահանջ չի կազմում:

աշխարհականների հետ՝ հոգևորականութիւնն ու նրա իրաւասութեան ենթակայ բոլոր դպրոցական հաստատութիւններն: Նկեղեցական շամբաւարերն (Церковный Вѣстникъ) իւր № 6-ում նկարագրում է ս. Պետերբուրգի հոգևոր ձեմարանում կատարուած մաղթանքն ու Բարձրագոյն հրովարտակի ընթերցանութիւնն և առաջ է բերում ձեմարանի տեսչի հետևեալ ճառը. — Նղբայրներ՝ հնչեց ահա ճակատագրական ժամը: Պատերազմի ուրուականը միանգամայն անսպասելի կերպով կանգնեց մեր աչքի առաջ... Մինչև օրս մենք կարող էինք փիլիսոփայութիւն անել, լինճել, դատել՝ թէ ինչ է պատերազմը, ներելի է արդեօք, թէ ոչ. մենք չեռաւոր Արևելքում որ և է դործի ձեռնարկելու, պատերազմելու կարիք ունէինք, թէ ոչ: Այժմս հասաւ այդ բոլոր դատողութիւնների վերջը: Այժմս արդէն գիտենք, որ այնտեղ՝ չեռաւոր Արևելքում թշնամու գէնքն ուղղուած է մեր հարազատ եղբայրների սրտին, որ այժմս այնտեղ արիւն են թափում և ծովի սառն ալիքներում կոտորում են նրանք, որոնց աշխատանքով և քրտինքով է ստեղծուել մեր բարեկեցութիւնը, որոնց ջանքն ու դէպի ամեն վտանգ ցոյց տուած անարատունջ վճռականութիւնը մեզ հնարաւորութիւն է տալիս վայելելու քաղաքակրթութեան բոլոր բարիքներն ու անհոգ փիլիսոփայութիւն անելու:

Թշնամին, խորամանկ և չը լինայող թշնամին, հպարտացած իւր արտաքին յաջողութիւնով և սառնարիւն իւր անգթութեան ժամանակ, բարձրացրել է յանդուգն ձեռքը մեր սիրելի ս. Ռուսաստանի դէմ: Կամենում է ստորացնել, նսեմացնել նրա փառքը, և խախտել նրա ոյժն ու նշանակութիւնն երկրիս վրայ: Կնդիրը մեր ինքնասիրութեան կամ հպարտութեան չի վերաբերում: Այնտեղ — չեռաւոր Արևելքում այժմ իրար դէմ կռիւ են մղում երկու ոյժեր՝ քրիստոնէական կրօնն ու խաւար կուսակաշտութիւնը: Չէ՞ որ ռուսաց իշխանութեան հետ այնտեղ հաստատում է Քրիստոսի խաչը, նրա հետ յաղթանակում է պրաւօսլաւ եկեղեցին, ռուսաց ազգեցութեան հետ՝ Արևելքը լուսաւորում է ձշմարտութեան լուսով. մինչդեռ ճապոնացին ուզում է հաստատել իւր ազգեցութիւնը, իւր չար կռակաշատական և զուտ աշխարհային կուլտուրան (քաղաքակրթութիւնը), որն հիմնուած է կոպիտ ոյժի, խորամանկութեան, խաբէութեան, հարստութեան և նիւթական արտաքին յաջողութեան վրայ: Չգտելով յաղթել և ստորացնել Ռուսիան, կանգնեցնել նրա յառաջխաղացութիւնը դէպի Արևելք, ճապոնացիք ցանկանում են սահմանափակել քրիստոնէութեան ազգեցութիւնը,

ցանկանում են հաւատքի փոխարէն՝ իբրև ժողովրդական կեանքի հիմունք, իրենց կողմից, անհաւատ և մթին ոյժն հաստատել:

Ի մի համախմբուինք, միանա՛ք եղբարք, մոռանանք մեր ընտանեկան հաշիւներն ու բաժանականութիւնը. յիշենք, որ մենք մի մօր՝ ս. Ռուսաստանի զաւակներն ենք և որ նա այժմս մեզ բողոքիս կանչում է պաշտպանելու մեր հինաւուրց ժառանգութիւնը՝ պրաւօսլաւ հաւատն և մեր համաշխարհային կոչումը: Եւ մենք, կրթուած և առաջաւորներս՝ այս ժամին պէտք է յիշենք այն անուրանալի և բազմիցս լկայուած ճշմարտութիւնը, որ մեր երկրին թշուառութիւնն ու փորձութիւնն ուղակում է այն մարդկանց մեղքերի համար, որոնք առաջաւոր են այդ երկրում և ժողովրդի ղեկավար են հանդիսանում: «Մենք, մեզ առաջաւոր ու լուսաւորուած համարողներս, որ մեզ վրայ ենք վերցրել ժողովրդին ղեկավարելու դերը, այժմս պէտք է խոստովանուինք, որ մեր պատճառաւն է Աստուած պատժում Ռուսաստանը. որ մեր մեղքերի համար ճայթեց կայծակը նրա գլխին, մեր մեղքերի համար են կոտորւում Ռուսաստանի ընտիր զաւակները, մեր մեղքերի համար է անբում ու թշուառութիւն կրում ուսու ժողովուրդը. այն՝ մեր դռնօղութեան, մեր դատարկ կրթութիւնով հպարտանալու, Աստուած ուրանալու և հայրերի աւանդութիւնները մոռանալու, հաւատքին ու եկեղեցուն թեթեամտութեամբ վերաբերուելու պատճառով:

Քաւենք, եղբարք, խոստովանենք մեր մեղքերը և զդալով մեր մեղաւորութիւնն ու անարժանութիւնը, եռանդազին ազօթենք ողորմած Աստուծուն, որ նա խնայի ս. Ռուսաստանը, կանգնեցնի իւր պատժող սուրբ և թոյլ չը տայ, որ թշնամին ստորացնի ու անարդի նրա հաւատը, նրա փառքն ու մեծութիւնը և թող նա նոր փայլով փայլեցնի Եւր խաչն Արևելքում. ամէն»:

Այնուհետև բողոք ուսուցչապետների ներկայութեամբ տեղի է ունեցել ժողով, որտեղ որոշուել է յայտնել Նորին Կայսերական Մեծաբեան թագաւոր կայսեր ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունքներ, պատիրազմական ծախսերի համար յատկացնել բողոք պաշտօնեաների ուժիկներից 50/0, իսկ ուսանողներն էլ զձուել են հրաժարուիլ տօնական օրերին մի տեսակ կերակրից և այդպիսով խնայած գումարն յատկացնել նոյն պատերազմի պէտքերին: ձեմարանի ուսանողներից շատերն էլ ցանկութիւն են յայտնել գնալու Հեռաւոր Արևելք՝ իբրև «հիւանդախնամ եղբայրներ»:

Նոյն թերթը («Гражданинъ») «Գրափոխանինից» քաղում է հետևեալը.

«Ժողովրդի բերանում առաջին անգամ երբ կրկնուեց ձայօնիայի անունը: Երբ հանդուցեալ խաղաղարար թագաւոր Աղէքսանդր III միանգամայն վստահ, որ իւր ժառանգի համար ըտրր երկրներումն էլ կատարեալ ապահովութիւն կլինի և ոչ մի վտանգ չի սպառնալ, ճանապարհորդելու ուղարկեց նրան և երբ ձայօնիայում՝ այդ վստահութեան փոխարէն՝ զգուելի փորձ արին նրա կեանքի դէմ:

Անցան տարիներ: Այդ թագաւորացիք թագաւոր դարձաւ Ռուսաստանի և ահա ռուսական կեանքում պատերազմի չաքադուշակ փոթորիկը ներս է փրթիում հէնց այն ժամանակ, երբ թագաւորին հարկաւոր էր խաղաղութիւն Ռուսաստանի ներքին կեանքի վերածնութեան վերաբերեալ իւր ըտրր հոգսերն իրականացնելու համար և այդ փոթորիկը գալիս է ձայօնիայից նոյնքան խորամանկ և ստոր, ինչպէս անկիւննից թագաժառանգի դէմ արած փորձը: ձայօնիան իւր յարձակումն սկսեց Ռուսաստանի պատասխանը ստանալուց առաջ: Երբ մտածում ու խորհրդածում ես, ահամայ հարց է ծագում—ճակատադրական մի բուն չի՞յ արդեօք այստեղ: Ռուսաստանի հսկայական մեծութեան մէջ թաղնուած չե՞ն արդեօք պատմական ճակատադրական գաղանկները: Նա մեծ է, քայց ո՞րքան մեծեն նաև նրան ուղարկած փորձութիւններն և այդ փորձութիւններն մէջ պատմական—ճակատադրական խնդիրներ չե՞ն երևում արդեօք: Եկատերինա II-ի թագաւորութեան ժամանակուայ հսկայական աճեցողութեամբ այդ ճակատագիրն ինչու համար էր պատրաստում երկտասարդ Ռուսիային Եւրոպական թագաւորութիւններն մէջ: Բանից երևաց, որ նրան պատրաստում էր ամբողջ Եւրոպայի փոխարէն իւր վրայ ընդունելու Նապօլէօնի յարձակման ամբողջ ոյժն ու ծանրութիւնը. իւր ժողովրդի թափած արեան գետերով, կրած տանջանքներով ու նեղութիւններով ամբողջ Եւրոպային ազատութիւն պարգևելու—համադրային այդ պատուհասի ձեռքից փրկելով:

Այսօր էլ վրդովուած միտքը կանգնած է հետևեալ հարցի առաջ. —

Աղէքսանդր III-ի թագաւորութեան ժամանակ, երբ Ռուսաստանն աւելի զօրացաւ, քան Եկատերինա II-ի օրօք, արդեօք այդ զօրանալը նրա համար չէր, որ նա՝ իւր արեան հեղեղներով, տանջանքով ու նեղութիւններով՝ Եւրոպայի փոխարէն պատերազմ դուրս գայ Ասիայի արևելքում արթնացած դեղին

ցեղի հանդէպս Այժմս միայն մի բան ես տեսնում ու զգում.—  
Ճանրէ Մօնօմարի դիւարին ու ճանրէ աշխարհիս վերայ Ռու-  
սաստան լինելը»:

Եկեղեցական Համբաւաբերն այս խորհրդածութիւններն  
աւելացնում է. «որ Ռուսիան պատերազմում է խաչի, քրիստո-  
նէական գաղափարի համար կռապաշտութեան դէմ, պատե-  
րազմում է քրիստոնէական սկզբունքներ պաշտպանելու, մի  
սուրբ և մաքուր գործ կատարելու: Նա կանգ չի առնիլ ոչ մի  
զոհաբերութեան առաջ և ինչպէս որ գեղեցիկ կերպով նկատել է  
Սնտօն միտրօպօլիարը, եթէ հարկաւոր լինի, վանքերն ու եկեղե-  
ցիները զոհ կը բերեն իրենց սրբութիւնների թանկագին զարդերն  
հայրենիքի սեղանի վրայ»:

XX Գարու առաջին պատերազմը մղած կլինի Ռուսաստանը  
խաչանիչ դրօշակով և խաչի համար և մենք հաւատում ենք,  
որ խաչը կը յաղթի»:

Մեր հողմից հաւելացնենք, որ այժմ, իւրաքանչիւր եկեղեցին  
պարտաւոր է տալ, եթէ միայն մի բան ունի, իսկ որ արգարու-  
թիւնը կը յաղթի, կը յաղթի ուղիղ խաչը, դորա համար պէտք է  
արդար զգալ և անսահման հաւատալ:

Նոյն թերթում կարդում ենք,—«Քաղկանեան թերակզոն  
վրայ գտնուած պրաւօսլաւ եկեղեցիներն են,— ա) Ռումանա-  
կանը՝ 8 թեմերից բաղկացած, բ) Սերբիականը՝—7 թեմերից,  
գ) Տրանսիլլանիայի՝—4 թեմերից, դ) Բիւկովինօ-Գալմացիայի՝  
(Ռուս—Սերբօ—Ռումանականը) 3 թեմերից, և ե) Բօսնիա—Հեր-  
ցեգօվինօ—Սերբիականը՝—4 թեմերից»:

Ռումանիայում սկսել է յաջողութեամբ տարածուել կա-  
թոլիկութիւնը, որին պաշտպան են հանդիսանում Կարլ թա-  
ղաւորն և նախարարապետ Ստրուձան: Բօսնիա և Հերցեգօվինա-  
յում փակուել է Ռիլևի պրաւօսլաւ հոգևոր դպրանոցը, որ միակ  
կրթարանն էր այդ երկրի պրաւօսլաւ հոգևորականութեան:  
Բուկովինօ—Գալմացիայի եկեղեցում ռուս ազգաբնակչութեանը,  
որի թիւը 30 հազարի է հասնում, ահագին զրկանքներ են հաս-  
ցրել և այդքան բաղմութեան համար նշանակել մի միայն 50  
ռուս քահանայ, մնացածներին ռումանացիներից կարգելով:  
Հոգևոր՝ բարձրագոյն պաշտօնները տրւում են ռումանացիներ-  
ին, իսկ հոգևոր դպրանոցներում մի միայն 3 ռուս սան է եղել  
և անցեալ տարի դադարել է պրաւօսլաւ «Բուկովինա» թերթը:

Լրագրի յօդուածագիրը գտնում է, որ երբէք այսպիսի  
հակառակութիւն չի եղել սլաւօնականութեան և նրա ուղեկից  
ռումանացիների մէջ և երբէք այդքան անհամերաշխ չի գտնուել

իրեն պաշտպան և հովանաւոր Ռուսաստանի հետ. որ սլաւոնականութեան կործանումն երբէք այնքան սպառնական և հաւանական չի եղել՝ ինչպէս անցած տարի և որ այդ հանգամանքի շնորհիւ արդաւանդ հողէ դանում կաթոլիկ և բողոքական պրօպագանդան և մեծ յաջողութեամբ տարածուած, առաջինն՝ —ամեն տեղ, իսկ երկրորդը՝ —Բօլղարիայում և Մակեդօնիայում:

## ԿԸԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Պետոս X պապը մեծ հոգս է տանում եկեղեցական երգեցողութեան և աշխատում է վերականգնել Գրիգորեան մեղեդիները: Նա շրջաբերականով պատուիրել է ամեն տեղ ճշտութեամբ կատարել այս առթիւ իրեն հոգմից եղած կարգադրութիւնն՝ իբրև օրէնք: Վերականգնելով Գրիգորեան եղանակները, պապն աշխատում է ազատել եկեղեցական երգեցողութիւնը թատրոնական երգեցողութեան ազդեցութիւնից, որն անցեալ դարու ընթացքում մուտք է գործել և տարածուել է ամբողջ Իտալիայում: Նա մտադիր է Գրիգորեան երգեցողութեամբ կատարել այս տարի հանդիսաւոր պատարագը ս. Գրիգորիոս մեծի գերեզմանի մօտ՝ նրա մահուան 1300 ամեակի առթիւ և այս պատճառով պատմաբաններից և հնագէտներից յատուկ մասնաժողով է ընտրուած աւուր պատշաճի հանդէսներ և դասախօսութիւններ կազմակերպելու ս. Գրիգորի և նրա գործունէութեան մասին:

Պետոս պապը նոյն շրջաբերականով յայտարարում է, որ կաթոլիկ եկեղեցու սոփոքական լեզուն լատիներէն է և այդ պատճառով արգելում է եկեղեցական հանդիսաւոր ասներին ուրիշ սրեւէ լեզուով պատարագ մատուցանել կամ բան երգել:

Նոր պապը իրախոսութիւն է մտցրել նաև եկեղեցական—վարչական ձևերի մէջ: Գեհամեմբերի 17-ին նա ոչնչացրել է կարգինալների այն խորհուրդը, որը պաշտօն և իրաւունք ունէր Իտալիայի համար եպիսկոպոսներ ընտրելու: Նա կարգադրել է, որ բացի սուրբ տեղերի եպիսկոպոսներից, որոնք ենթակայ են Պրօպագանդային և եկեղեցու արտաքին գործերի վրայ հսկող արտակարգ խորհրդին, մնացածներին ընտրի ս. ժողովը, որն նախագահն ինքը՝ Պետոս X է, որովհետև այս ժողովի մէջ շափազանց խիտ է դաղանապասութիւնը և նրա գէմ մեղանշագններին ուղղակի կարգաւոյժ են անում:

Պետոս պապը Փետրուարի 5-ին՝ իւր անուանակոչութեան